Կարգապահական գործ թիվ ԿԳ-23023

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՓԱՍՏԱԲԱՆ ՌԱԶՄԻԿ ԱՐԱՄԱՅԻՍԻ ՇԻՐՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Միքայել Դանիելյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Ռազմիկ Շիրոյանի ներկայացուցչի՝ փաստաբան Զարուհի Փոստանջյանի,

քննության առնելով փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 285), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արա Արթուրի Հովակիմյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով ՀՀ փաստաբանների պալատ **(այսուհետ՝ Պալատ)**, հայտնել է, որ ինքը ձերբակալվել է 2023 թվականի փետրվարի 14-ին:

Դիմողը հայտնել է, որ ինքը կամ իր բարեկամները որևէ փաստաբանի չեն դիմել իր շահերը պաշտպանելու համար, սակայն մեկ օր անց՝ Ոստիկանության կողմից որպես «անվճար փաստաբան» իրեն է ներկայացվել փաստաբան Ռազմիկ Շիրոյանը, ինչից հետո իրեն ասել են, որ պետք է դիմում գրի և համաձայնվի, որ իր շահերը պաշտպանի այդ անձը, ինչին Դիմողը համաձայնվել է, քանի որ չի կարողացել ընդդիմանալ:

Դիմողի պնդմամբ, փաստաբան Ռազմիկ Շիրոյանը գործին ներգրավվել է ոստիկանների հրավերով և իրեն որևէ կերպ չի պաշտպանել, անգամ որևէ բան չի քննարկել՝ այլ միայն ստորագրել է քննիչների կամ ոստիկանների գրածները:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանին ենթարկել պատասխանատվության:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 26.06.2023 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողի 10.07.2023թ.-ի բացատրությամբ Դիմողն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված իր դիրքորոշումը, հավելելով, որ 2023թ-ի փետրվարի 15-ի իր բջջային հեռախոսահամարի հեռախոսազանգերի վերծանման քաղվածքը ստանալու համար դիմում է ներկայացրել բջջային օպերատորին և այն կներկայացնի իրեն տրամադրելուն պես:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Արա Հովակիմյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2023 թվականի մայիսի 18-ին ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 2023 թվականի փետրվարի 15-ին իր հեռախոսահամարին է զանգահարել Արա Արթուրի Հովակիմյանը և խնդրել ստանձնելու իր շահերի պաշտպանությունը, որին Փաստաբանը համաձայնել է:

Փաստաբանը հայտնել է, որ առանձնազրույց է ունեցել Արա Արթուրի Հովակիմյանի հետ՝ բացատրել է նրան իր իրավունքները ու պարտականությունները, ինչպես նաև քննարկվել են այլ հարցեր:

Փաստաբանը նաև նշել է, որ առանձնազրույցի ընթացքում Դիմողից տեղեկացել է, որ նա փաստացի մեղադրվում է հափշտակությունների կատարման մեջ, որի վերաբերյալ ինքն ունեցել է ինքնախոստովանական դիրքորոշում, բացի այդ ցանկություն է հայտնել աջակցել վարույթ իրականացնող մարմնին, քանի որ վերջինս զղջացել է արարքի համար: Բացի այդ, նա հանցագործությունների վերաբերյալ տվել է բանավոր հաղորդում, որին ինքը դեռևս մասնակից չի եղել և, գնահատելով վերջինիս ազատության մեջ մնալու իրական հնարավորությունները, քրեական վարույթին մասնակցել են մարտավարական այս եղանակով, որը քննության սկզբնական փուլում հնարավորություն է տվել Դիմողին՝ բազմադրվագ հանցանքներ կատարելու հիմնավոր կասկածի առկայության պայմաններում մնալ ազատության մեջ:

Փաստաբանի պնդմամբ ինքը Դիմողի շահերի պաշտպանությունը ստանձնել է նրա իսկ խնդրանքով, ինչը հաստատվում է քրեական գործի նյութերով, հետևաբար չի գործել քննիչի կամ Ոստիկանության աշխատակիցների հանձնարարությամբ: Ավելին, Դիմողին պատշաճ իրավաբանական օգնություն ցույց տալու արդյունքում՝ վերջինս գտնվում է ազատության մեջ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 28.06.2023 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 13.07.2023թ. ներկայացված բացատրությամբ ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը, հավելելով, որ իր կողմից շահագործվող 094-96-07-42 բջջային հեռախոսահամարի վերծանումների համար դիմել է Վիվասել ՄՏՍ ընկերություն Գյումրու մասնաճյուղ, որտեղ իրեն հայտնել են, որ իր նշված բջջային հեռախոսահամարի մուտքային հեռախոսազանգերը չեն կարող տրամադրել, այլ կարող են տրամադրել միայն ելքային զանգերը:

Հանձնաժողովի նիստի շրջանակներում Փաստաբանի ներկայացուցիչը հայտնել է, որ գործի շրջանակներում չկա այլ ապացույց քան Դիմողի բողոքը, իսկ կատարված զանգերի վերծանումների քաղվածքին ինքը ևս կցանկանար ծանոթանալ, քանի որ բջջային օպերատորը տրամադրում է միայն Փաստաբանի կողմից կատարված զանգերի վերաբերյալ տեղեկություններ:

Փաստաբանի ներկայացուցիչը նշել է, որ Դիմողը Փաստաբանին դիմել է ընդհանուր ծանոթի միջոցով, ինչպես նաև հավելել, որ Փաստաբանը ձեռք է բերել պայմանավորվածություն ծառայության գնի վերաբերյալ, ունեցել է մտադրություն հետագայում շարունակել ծառայությունների մատուցումը և կնքել պայմանագիր, սակայն Դիմողը չի ունեցել բավարար միջոցներ սկզբնական փուլում ծառայությունների դիմաց վճարել, իսկ հետագայում, մինչև պայմանագրի կնքումը, հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից:

Փաստաբանի ներկայացուցչի պնդմամբ, մատուցման ենթակա ծառայությունների ծավալը սահմանափակված է եղել Դիմողի շահերի ներկայացմամբ մինչդատական վարույթի շրջանակներում, և հենց Փաստաբանի գործողությունների արդյունքում Դիմողը մնացել է ազատության մեջ որոշ ժամանակ:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամի կողմից հնչեցրած այն հարցին, թե արդյո՞ք Փաստաբանը Դիմողին տեղեկացրել է հանրային պաշտպանի ներգրավման մասին, քանի որ Դիմողը չի ունեցել բավարար միջոցներ, Փաստաբանի ներկայացուցիչը պատասխանել է, որ Դիմողը ցանկություն է հայտնել հենց Փաստաբանի կողմից իր շահերի պաշտպանության իրականացման մասին:

Հանձնաժողովի նիստի շրջանակներում Փաստաբանի ներկայացուցիչը նաև հայտնել է, որ Դիմողի բողոքի պատճառը հանդիսացել է Շիրակի մարզում փաստաբանների մրցակցությունը, ինչով պայմանավորված մեկ այլ փաստաբան դրդել է Դիմողին բողոք ներկայացնել Փաստաբանի դեմ և հրաժարվել նրա ծառայություններից:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 25.05.2023թ. թիվ 137-Ա/ԿԳ-23023 որոշմամբ փաստաբան Ռազմիկ Շիրոյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 2.7.2 և 3.1.9 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

26.05.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին, իսկ 21.07.2023թ. վերահանձնարարվել է Պալատի աշխատակազմի

սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 26.07.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված չեն համարվել այն հանգամանքները, որ թիվ 18106323 քրեական վարույթի շրջանակներում Փաստաբանի կողմից Դիմողի իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ պատշաճ գործողություններ են կատարվել, Դիմողն անձամբ կամ իր հանձնարարությամբ գործող այլ մասնավոր անձի միջոցով է դիմել Փաստաբանին:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 26.07.2023թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 26.10.2023թ. ժամը 19:45-ին և 14.12.2023թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը նախաքննության փուլում ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը՝ առանց դիմողի կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձի նախաձեռնության (առաջարկի): *Նշված փաստը հաստատվում է, քանի որ Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց, որ քրեական գործով պաշտպանության համար իրեն է դիմել վստահորդը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ:*

2. Դիմողը՝ որպես քրեական գործով մեղադրյալ, իր իրավունքների և պարտականությունների մասին ծանուցվել է 25.03.2023թ.: *Նշված փաստը հաստատվում է 25.03.2023թ. մեղադրյալի իրավունքները բացատրելու մասին, ինչպես նաև մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ծանուցման մասին արձանագրությամբ:*

3. Գործում առկա չէ որևէ ապացույց՝ Փաստաբանի կողմից քրեական վարույթում Դիմողի իրավունքներն ու օրինական շահերը պատշաճ և բավարար պաշտպանելու մասին:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի շրջանակներում՝ Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, ինչպես նաև դրանց կից ներկայացված նյութերի ուսումնասիրության արդյունքում **հաստատված չեն համարվում հետևյալ հանգամանքները.**

1. Թիվ 18106323 քրեական վարույթի շրջանակներում Փաստաբանի կողմից Դիմողի

իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ պատշաճ գործողություններ կատարելու հանգամանքը չի հաստատվել: *Նշվածի կապակցությամբ Փաստաբանի կողմից որևիցե ապացույց չի ներկայացվել, իսկ ներկայացված պարզաբանումն իր կողմից կատարված գործողությունների վերաբերյալ, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք կազմվել են Փաստաբանի մասնակցությամբ/ներկայությամբ (15.02.2023թ. դիմումը՝ փաստաբան Ռազմիկ Շիրոյանին որպես Դիմողի փաստաբան հանդես գալու համաձայնության մասին, 15.02.2023թ. փորձաքննություն կատարելու մասին /տեսաձայնագրությամբ/ արձանագրությունը, 23.03.2023թ. փորձաքննություն կատարելու մասին արձանագրությունը, 23.03.2023թ. վկա-մեղադրյալի հարցաքննության և լրացուցիչ հարցաքննության մասին արձանագրությունները, 25.03.2023թ. մեղադրյալի հարցաքննության մասին արձանագրությունը, 25.03.2023թ. մեղադրյալի իրավունքները բացատրելու մասին արձանագրությունը, 25.03.2023թ. խափանման միջոց բացակայելու արգելք կիրառելու մասին արձանագրությունը, 25.03.2023թ. մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ծանուցման մասին արձանագրությամբ 26.03.2023թ. առերես հարցաքննության մասին երկու արձանագրություններ) չեն վկայում ստանձնած հանձնարարության պատշաճ կատարման ապահովման և համապատասխանաբար բարեխիղճ իրավաբանական օգնության տրամադրման մասին: Ավելին, չկա ապացույց (նշում միջնորդությունը հանձնելու կամ փոստով ուղարկելու մասին) առ այն, որ Փաստաբանը ուղարկել կամ հանձնել է ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության քննիչին հասցեագրված 24.03.2023թ. միջնորդությունը՝ Դիմողի նկատմամբ կիրառվելիք կալանավորման հետ չկապված այլ խափանման միջոց կիրառելու մասին:*

2. Նկատի ունենալով Կանոնագրքի 3.1.9-րդ ենթակետի կարգավորումը, Փաստաբանը պարտավոր է ապացուցել այն հանգամանքը, որ Դիմողն անձամբ կամ իր հանձնարարությամբ գործող այլ մասնավոր անձի միջոցով է իրեն դիմել: Նշվածի կապակցությամբ Փաստաբանը մեջբերել է 15.02.2023թ. դիմումը (համաձայնությունը): *Հարկ է սակայն նշել, որ նշված դիմումի (համաձայնության) առկայությունն ինքնին չի կարող վկայել նախաքննության մարմնի առաջարկով քրեական գործով վարույթում Փաստաբանի ներգրավված չլինելու մասին: Միաժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն, որ Փաստաբանի պնդմամբ՝ Դիմողն է իրեն զանգահարել իր շահերի պաշտպանությունն իրականացնելու համար, սակայն նույնիսկ այդ փաստը չի ապացուցել:*

3. Փաստաբանի ներկայացուցիչը նշել է, որ Դիմողը Փաստաբանին դիմել է ընդհանուր ծանոթի միջոցով: *Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց՝ վերը նշված տեղեկությունը հաստատելու վերաբերյալ:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ռազմիկ Շիրոյանը փաստաբան է հանդիսանում 07.11.1996 թվականից, և 2019-2023թթ. ընկած ժամանակահատվածում ունի 1 (մեկ) կարգապահական տույժ, որը մարված չէ:

Մասնավորապես, Պալատի Հանձնաժողովի 13.07.2023թ. թիվ ԿԳ-23015-2-Ա որոշմամբ փաստաբան Ռազմիկ Շիրոյանի նկատմամբ **Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.9 ենթակետի խախտման համար կիրառվել է որպես հիմնական**

կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն, և լրացուցիչ կարգապահական տույժ՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցություն Դեոնթոլոգիա թեմայով:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.1.9 ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից նաև հետևում է, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հանգամանքների այնպիսի համակցություն, որոնք ոչ միայն արտաքուստ, առանց դրանց ըստ էության քննության, ողջամիտ կասկած են հարուցում փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ, այլ նաև ապացուցում են դրանց առկայությունը:

Ըստ այդմ, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին

դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի և/կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին, կամ, որոնք Կանոնագրքով առանձին դեպքերի համար նախատեսված կանխավարկածի ուժով հաստատված կդարձնեն Փաստաբանի կողմից կարգապահական խախտում թույլ տալու փաստը:

Տվյալ դեպքում, Դիմողն, ըստ էության, Փաստաբանին վերագրում է բարեխիղճ իրավաբանական օգնություն ցույց չտալու, ինչպես նաև նախաքննության փուլում տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու առաջարկ ընդունելու վարքագիծը:

Կարգապահական վարույթի շրջանակներում վերը նշված հանգամանքները պարզելու համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում պատասխանել մասնավորապես հետևյալ հարցերին.

- ***արդյո՞ք փաստաբան Ռազմիկ Շիրոյանը ստանձնել է թիվ 18106323 գործով վարույթին առնչվող Դիմողի շահերի և իրավունքների պաշտպանությունը տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված առաջարկով:***
- ***արդյո՞ք փաստաբան Ռազմիկ Շիրոյանը բարեխիղճ իրավաբանական օգնություն է ցույց տվել իր վստահորդին և ըստ այդմ պատշաճ կարգով ներկայացրել է նրա շահերը:***

7.1. ***Արդյո՞ք փաստաբան Ռազմիկ Շիրոյանը ստանձնել է թիվ 18106323 գործով վարույթին առնչվող Դիմողի շահերի և իրավունքների պաշտպանությունը տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված առաջարկով:***

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 3.1.9-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը չի կարող ընդունել նախաքննության և դատաքննության փուլերում տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու առաջարկ:* ***Եթե փաստաբանը չկարողանա ապացուցել, որ քրեական գործով պաշտպանության համար իրեն է դիմել վստահորդը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ, ապա Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է հաստատված համարել այն փաստը, որ փաստաբանը քրեական գործով վարույթում է հայտնվել նախաքննության մարմնի առաջարկով:*** *Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է հաշվի առնել նաև փաստաբանի կողմից իրականացրած գործողությունների բնույթը՝ վստահորդի շահերը պատշաճ կարգով ներկայացված լինելու տեսանկյունից:* ***Փաստաբանի կողմից նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ) գործին ներգրավված լինելու և վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց տված չլինելու արարքների համակցությունը հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում:***

Վկայակոչված նորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումից և իր պարտականությունների բարեխիղճ

կատարումից բացի փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից է հանդիսանում նաև անկախության սկզբունքը, որի բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը՝ իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս, պետք է ոչ միայն ելնի վստահորդի նպաստավոր շահերից, բարեխղճորեն և ժամանակին պաշտպանի վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, այլ նաև իր գործունեությունն իրականացնելիս՝ նաև անկախ լինի, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և, որը կարող է բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Ավելին, Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի դրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար:

Այս համատեքստում, առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի կողմից նախաքննության և դատաքննության փուլերում տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու առաջարկ չընդունելու սահմանափակումը, որի պահպանումը սերտորեն կապված է անկախության սկզբունքի պահպանման հետ:

Բացի այդ, հաշվի առնելով այդպիսի վարքագծի վտանգավորությունը՝ Կանոնագրքի շրջանակներում այն կարող է դիտարկվել նաև որպես ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում, որի համար անհրաժեշտ է երկու վավերապայմանների (արարքների) միաժամանակյա առկայությունը (համակցությունը)՝ այն է

1) *Փաստաբանի կողմից նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ) գործին ներգրավված լինելը և*

2) *վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց չտալը:*

Բացի այդ, նշված տրամաբանության հաշվառմամբ Կանոնագրքի հիշյալ դրույթի բովանդակությամբ փաստացի նախատեսվել է նաև ապացուցման առանձնահատուկ պարտականություն, որը կրում է հենց Փաստաբանը *(Փաստաբանը պետք է ապացուցի, որ իրեն է դիմել վստահորդը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ, որի չապացուցման դեպքում գործում է վարույթ իրականացնող մարմնի կողմից ներգրավվելու կանխավարկածը)*, և, որի չկատարումը հանգեցնում է Փաստաբանի՝ նախաքննության մարմնի առաջարկով քրեական գործով վարույթում հայտնվելու փաստի հաստատմանը:

Սույն կարգապահական գործի շրջանակներում, Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ Փաստաբանի կողմից վկայակոչված Դիմողի 15.02.2023թ. դիմումը, ինչպես նաև քննիչի 25.03.2023թ. մեղադրյալի իրավունքները բացատրելու մասին արձանագրությունը (իրավունքների պաշտպանությունը Փաստաբանի կողմից իրականացնելու մասին հայտարարությամբ) ինքնին չեն կարող վկայել նախաքննության մարմնի առաջարկով քրեական գործի վարույթում Փաստաբանի ներգրավված չլինելու մասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիմողի պնդման համաձայն, ինքն ի սկզբանե Փաստաբանին չի դիմել, ինչպես նաև նկատի ունենալով այն, որ հիշատակված դիմումը և

արձանագրությունը կազմվում են նաև այն դեպքում, երբ փաստաբանը գործին փաստացի ներգրավվում է գործը վարող պաշտոնատար անձի առաջարկով կամ հրավերով: Ավելին, 15.02.2023թ. դիմումից չի հետևում, որ Փաստաբանը Դիմողի հրավերով է ներգրավվել քրեական գործի վարույթում:

Բացի այդ, չնայած Փաստաբանի պնդմանն առ այն, որ Դիմողը 15.02.2023թ. զանգահարել է իրեն պատկանող 094960742 բջջային հեռախոսահամարին՝ խնդրելով ստանձնել նրա շահերի պաշտպանությունը, և այդ օրվա զանգերի քաղվածքը ստանալու համար Փաստաբանը դիմել է բջջային օպերատորին, սակայն ստացել է մերժում, այնուամենայնիվ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ կարգապահական վարույթի շրջանակներում՝ ընդհուպ մինչև գործի ավարտը, Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց առնվազն այն մասին, որ դիմել է բջջային օպերատորին զանգերի քաղվածքը ստանալու համար, որպիսի պայմաններում հնարավոր չէ ապացուցված համարել անձամբ Դիմողի կողմից Փաստաբանին դիմելու հանգամանքը:

Նման պայմաններում, Հանձնաժողովը՝ գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Փաստաբանի կողմից փաստացի չի ներկայացվել որևէ ապացույց, որը կհիմնավորեր քրեական գործով պաշտպանության համար իրեն վստահորդի կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձի դիմելու փաստը, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի և Կանոնագրքի 3.1.9 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները:**

7.2. ***Արդյո՞ք փաստաբան Ռազմիկ Շիրոյանը բարեխիղճ իրավաբանական օգնություն է ցույց տվել իր վստահորդին և ըստ այդմ պատշաճ կարգով ներկայացրել է նրա շահերը:***

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են որոշակի պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի կարող են արդյունավետ լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման

առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Իրենց գործառույթներն իրականացնելիս փաստաբաններն ունեն ոչ միայն իրավունքներ, այլ նաև առանձնահատուկ պարտականություններ և պարտավորություններ իրենց վստահորդների և դատարանների առջև:

ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» 25.10.2000թ.Rec(2000)21 հանձնարարականի համաձայն, **փաստաբանները իրենց վստահորդների առջև պարտավոր են ձեռնարկել իրավական գործողություններ իրենց վստահորդի իրավունքները և շահերը պաշտպանելու, հարգելու և իրացնելու ուղղությամբ** (կետ 3(գ)):

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի)՝ Եվրոպական փաստաբանների վարքագծի կանոնակարգի համաձայն՝ **փաստաբանը պետք է իր վստահորդին խորհրդակցի և նրա շահերը ներկայացնի «արագորեն, բարեխղճորեն և ջանասիրաբար», և փաստաբանը պետք է անձնական պատասխանատվություն վերցնի իր վրա վստահորդի հրահանգները կատարելու ուղղությամբ, և պետք է իր վստահորդին տեղեկացված պահի այն խնդրի զարգացումների մասին, որը նրան վստահվել է** (կետ 3.1.2.):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ փաստաբանների հատուկ դերակատարումը, արդարադատության իրականացման հարցում որպես անկախ մասնագետների, իր մեջ ներառում է մի շարք պարտավորություններ, հատկապես այն դեպքերում, երբ այն վերաբերում է նրանց վարքագծին: Չնայած փաստաբանները ենթակա են սահմանափակումների իրենց մասնագիտական գործունեության մեջ, որոնք պետք է լինեն շրջահայաց, արդար և ազնիվ, նրանք միաժամանակ օգտվում են բացառիկ իրավունքներից և արտոնություններից, (Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի, թիվ 29369/10, ՄԻԵԴ, § 133): Փաստաբանը ոչ միայն պարտավոր է իրավաբանական ներկայացուցչությունը կատարել բարեխղճորեն, այլ նաև իր վստահորդի շահերը պաշտպանել եռանդուն կերպով, որը նշանակում է, որ երբեմն նրանք պետք է որոշում կայացնեն, թե արդյոք նպատակահարմար է առարկել կամ բողոքել դատարանի գործողությունների դեմ (Տե՛ս Մորիս, § 137):

Հանձնաժողովը չի կարող սահմանել այն անհրաժեշտ գործողությունների ծավալը, որը փաստաբանը պարտավոր է կատարել, քանի որ յուրաքանչյուր գործով կարող է այն տարբեր լինել՝ ելնելով տվյալ գործի առանձնահատկություններից և հանգամանքներից:

Սակայն գոյություն ունի գործողությունների որոշակի նվազագույն չափ, որը ողջամիտ, անաչառ դիտորդի տեսանկյունից փաստաբանը պարտավոր է կատարել իր վստահորդի կենսական շահերի և հիմնական իրավունքների պաշտպանության ուղղությամբ, ինչը և կվկայի առնվազն փաստաբանի բարեխղճության առերևույթ առկայության մասին: Այս առումով, փաստաբանի մասնագիտական բարեխղճության չափանիշներ է սահմանում Կանոնագրքի 2.7.2 ենթակետը, որը նախատեսում է փաստաբանի կողմից վստահորդի հանձնարարության բարեխիղճ կատարման հետևյալ պայմանները՝

1. իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն.

2. վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն.

3. հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Իրավունքի համապատասխան ճյուղի իմացությունը նշանակում է բավարար իրազեկվածություն ոչ միայն իրավունքի տվյալ ճյուղի նորմերի և դրանցով կարգավորվող հասարակական հարաբերությունների վերաբերյալ, այլև դրանք համադրելու, վերլուծելու, դրանցում վստահորդի շահերից բխող բացերի իմացություն, մի քանի իրավական լուծումների մեջ վստահորդի շահերին լավագույնս համապատասխանող լուծման ընտրություն և իրավունքի տվյալ ճյուղից բխող պրակտիկայի իմացություն, այդ թվում իրավասու մարմինների կողմից իրավունքի տվյալ ճյուղի նորմերին տրվող գործնական մեկնաբանության և կիրառման առանձնահատկությունների վերաբերյալ:

Վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրության փաստաբանի պարտականությունը նշանակում է վստահորդի խնդրին առնչվող բոլոր փաստերի ուսումնասիրություն և վերլուծություն:

Հանձնարարությունների պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարման պարտականությունն արդեն վերոնշյալ երկու պարտականություններից ուղղակիորեն հետևող գործողությունների կատարումն է, ինչը ենթադրում է փաստաբանի մոտ վստահորդի խնդրի վերաբերյալ անհրաժեշտ պատկերացման ձևավորում և իրավունքի համապատասխան ճյուղի շրջանակներում դրա լուծման ուրվագծում, վստահորդի շահերի սպասարկման արդյունավետ ուղիների ու եղանակների կանխատեսում, որի հիման վրա փաստաբանը պարտավոր է ձեռնարկել համապատասխան և համարժեք իրավական և փաստացի միջոցներ, որոնք պետք է լինեն իրական և արդյունավետ, այլ ոչ թե ձևական և պատրանքային:

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանողը պետք է կատարեր իր վստահորդի կենսական շահերի և հիմնական իրավունքի պաշտպանությանն ուղղված նվազագույն ողջամիտ գործողություններ:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Փաստաբանը 15.02.2023թ. ստանձնել է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանությունը թիվ 18106323 քրեական վարույթի շրջանակներում և պետք է ներկայացներ նրա շահերը մինչդատական վարույթում:

Նշված պահից Փաստաբանի մասնակցությամբ/ներկայությամբ կազմվել են՝

- 15.02.2023թ. դիմումը՝ փաստաբան Ռազմիկ Շիրոյանին որպես Դիմողի փաստաբան հանդես գալու համաձայնության մասին,
- 15.02.2023թ. փորձաքննություն կատարելու մասին /տեսաձայնագրությամբ/ արձանագրությունը,
- 23.03.2023թ. փորձաքննություն կատարելու մասին արձանագրությունը,
- 23.03.2023թ. վկա-մեղադրյալի հարցաքննության և լրացուցիչ հարցաքննության մասին արձանագրությունները,
- 25.03.2023թ. մեղադրյալի հարցաքննության մասին արձանագրությունը,
- 25.03.2023թ. մեղադրյալի իրավունքները բացատրելու մասին արձանագրությունը,
- 25.03.2023թ. խափանման միջոց բացակայելու արգելք կիրառելու մասին արձանագրությունը,
- 25.03.2023թ. մեղադրյալի իրավունքների և պարտականությունների ծանուցման մասին արձանագրությունը,
- 26.03.2023թ. առերես հարցաքննության մասին երկու արձանագրություններ:

Միաժամանակ, սույն կարգապահական գործի շրջանակներում Փաստաբանի կողմից ներկայացվել է Շիրակի մարզային քննչական վարչության քննիչին հասցեագրված 24.03.2023թ. միջնորդությունը՝ Դիմողի նկատմամբ կիրառվելիք կալանավորման հետ չկապված այլ խափանման միջոց կիրառելու մասին, որը հասցեատիրոջն անձամբ, փոստով կամ այլ եղանակով ուղարկված կամ հանձնված լինելու մասին որևէ ապացույց առկա չէ:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն հանգամանքը, որ ցանկացած դեպքում հանձնարարության կատարման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը փոխկապակցված է դրանց արդյունավետ՝ այդ թվում ժամանակային առումով գործադրման հետ: Ընդ որում, հաշվի առնելով փաստաբանի իրավապաշտպան առաքելությունը և համապատասխան իրավունքի իրացման համար օրենքով սահմանված ժամկետները՝ Փաստաբանն իր վստահորդին ցուցաբերելով բարեխիղճ իրավաբանական օգնություն, պետք է հետևողական լինի գործի ընթացքին և ողջամիտ ժամկետում, կատարի իր վստահորդի իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ բոլոր գործողությունները:

Տվյալ դեպքում, չնայած նրան, որ թիվ 18106323 քրեական վարույթի շրջանակներում կազմվել են մի շարք փաստաթղթեր, ուր առկա է Փաստաբանի ստորագրությունը, ինչից հետևում է, որ Փաստաբանը ներկա է եղել քրեական վարույթին, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք ինքնին բավարար չեն Փաստաբանի կողմից Դիմողի իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանության ուղղությամբ բավարար գործողություններ կատարելու հանգամանքը հաստատված համարելու համար:

Թիվ 18106323 քրեական վարույթի շրջանակներում Դիմողը.

- հանցագործությունների վերաբերյալ տվել է բանավոր հաղորդում,
- ցանկություն է հայտնել աջակցել վարույթ իրականացնող մարմնին,
- ունեցել է ինքնախոստովանական դիրքորոշում:

Հարկ է նշել, որ Փաստաբանի բացատրություններում բացակայում է տվյալ այն մասին, որ վերջինս խորհրդատվության շրջանակներում փորձել է պարզել Դիմողի կողմից ինքն իր դեմ հաղորդում ներկայացնելու շարժառիթը, ինչը կարող էր առանցքային նշանակություն

ունենալ վստահորդի նկատմամբ ճնշումները բացահայտելու և չեզոքացնելու հարցում: Բացի այդ, վերը նշված հանգամանքները՝ Դիմողի պնդումների համատեքստում հնարավոր ճնշումների, ընդհուպ՝ հնարավոր խոշտանգման կամ պաշտպանվածության բացակայության վերաբերյալ ազդակներ են, որպիսի պայմաններում Փաստաբանը առնվազն պետք է քննարկման առարկա դարձներ, ստուգեր և հակառակի բացակայության մասին ողջամիտ և հիմնավորված համոզմունք ձևավորելու հիմքեր ունենար, որոնք հիմնված կլինեին բավարար օբյեկտիվ փաստական տվյալների վրա: Օրինակ, այդպիսիք կարող էին լինել բժշկական զննություն անցնելու առաջարկ ներկայացնելը վստահորդին կամ դա պահանջելը վարույթն իրականացնող մարմնից: Երկրորդ քայլը կարող էր լինել՝ այլ միջավայրում (քրեական հետապնդման մարմինների անմիջական ազդեցությունից հնարավորինս հեռու միջավայրում) առանձնատեսակցություն ունենալը և պաշտպանական մարտավարություն նախապատրաստելու, դրանից բխող գործողություններ իրականացնելու համար ժամանակ պահանջելը, որը նաև նպատակ կունենար համոզվել ճնշումների բացակայության հարցում: Անհրաժեշտ էր նաև վստահորդին հստակ պարզաբանել նրա դիրքորոշման հնարավոր հետևանքները, մասնավորապես՝ քննության սկզբնական փուլում ազատության մեջ մնալու կարճաժամկետ հեռանկարը, դատապարտման գործնական անխուսափելիությունը և հնարավոր պատիժը, այդ թվում՝ երկար ժամկետով ազատությունից զրկելու ձևով:

Որևէ տվյալ առկա չէ այն մասին, թե Փաստաբանի կողմից միջոցներ ձեռնարկվել են արդյոք պարզելու՝ բացի Դիմողի հաղորդումը, արդյոք վարույթում առկա է որևէ այլ տվյալ, որը կհիմնավորեր Դիմողի պնդումներն իր կողմից մի շարք հանցանքներ կատարած լինելու մասին: Ասվածը կարևորվում է այն բանով, որ երբեմն ոստիկանության աշխատակիցները պարզապես ունենալով օպերատիվ տվյալներ և չկարողանալով դրանք իրացնել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, ենթադրյալ հանցանք կատարած անձին մոլորության մեջ գցելով կամ նրա նկատմամբ որոշակի հարկադրանք կիրառելով ստիպում են տալ ինքնամերկացնող ցուցմունքներ: Նման տեղեկությունների աղբյուր կարող էր լինել հենց ինքը Դիմողը, եթե ոստիկանության աշխատակիցները որևէ փուլում ճնշումների եղանակով փորձել են հասնել անձի կողմից իր վերաբերյալ հանցագործության մասին հաղորդում տալուն:

Այս առումով հատուկ պետք է ընդգծել, որ «քննության սկզբնական փուլում ազատության մեջ մնալու հնարավորությունը» ինքնին բավարար և ծանրակշիռ փաստարկ չէ վստահորդի լավագույն շահը ապահոված լինելու տեսանկյունից, այն պետք է դիտարկել ամբողջի համատեքստում՝ արդյունավետ և պատշաճ պաշտպանության առումով, քանիզի կարճ ժամանակով ազատության մեջ գտնվելը չարդարացված գին է՝ հետա հնարավոր խիստ պատժի դիմաց:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 97-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքի էական խախտմամբ ստացված տվյալները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված վարութային գործողությունների արդյունքով ձեռք բերված տվյալները ճանաչվում են անթույլատրելի և չեն կարող օգտագործվել որպես ապացույց:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պաշտպանի բացակայությամբ մեղադրյալի տված ցուցմունքները չեն կարող օգտագործվել որպես ապացույց, եթե մեղադրյալը դատարանում հրաժարվել է դրանցից:

Այս համատեքստում Փաստաբանը պետք է նաև հստակ պարզաբաներ վստահորդին այլ մարտավարություն ընտրելու (ինքնաբացահայտող դիրքորոշումը փոփոխելու) առավելությունները և հնարավոր ռիսկերը, որի արդյունքում վստահորդը հնարավորություն կունենար օբյեկտիվորեն փաստարկված և կշռադատված որոշում կայացնել:

Հանձնաժողովն ընդգծում է, որ նշվածները ոչ թե յուրաքանչյուր գործով փաստաբանների կողմից իրականացման ենթակա պարտադիր գործողությունների ուղեցույց են, այլ ընդամենը օրինակ՝ ի ցույց դնելու ի թիվս այլնի հնարավոր այն քայլերը, որոնց իրականացումը կարող է վկայել փաստաբանի կողմից քրեական վարույթում անձի իրավունքներն ու օրինական շահերը պատշաճ և բավարար պաշտպանելու մասին:

Հանձնաժովովն ըստ այդմ փաստում է նաև, որ Փաստաբանը չի ապացուցել նշվածներից տարբերվող թեկուզև այլ գործողություններ իր կողմից նախաձեռնված լինելու փաստը, ուստի Հանձնաժողովը զրկված է Փաստաբանի այլ գործողությունների պատշաճությունը կոնկրետ դեպքում գնահատելու հնարավորությունից, ինչը Դիմողի պնդումների և քրեական վարույթի նյութերի համակցությամբ հանգեցնում է Փաստաբանի կողմից Դիմողի պաշտպանությունը պատշաճ իրականացվելու փաստի չհաստատմանը:

Ինչ վերաբերում է Փաստաբանի պնդմանն առ այն, որ Դիմողն ի սկզբանե տվել է ինքնախոստովանական ցուցմունք այն փուլում, երբ Փաստաբանը դեռևս ստանձնած չի եղել Դիմողի իրավունքների պաշտպանությունը, և ցանկացել է համագործակցել վարույթն իրականացնող մարմնի հետ, ինչով պայմանավորված էլ Փաստաբանը իրավունք չի ունեցել նշվածին հակառակ դիրքորոշում հայտնել, Հանձնաժողովը վերը նշվածի լույսի ներքո նաև արձանագրում է, որ Փաստաբանն ըստ էության ներկա է եղել քրեական վարույթում 3 օր (15.02.2023թ., 25.03.2023թ. և 26.03.2023թ.) և ցանկացած դեպքում պետք է ելներ իր վստահորդի նպաստավոր իրավունքների ու շահերի արդյունավետ պաշտպանությունից՝ ձեռնարկելով իրենից կախված ինչպես անհրաժեշտ, այնպես էլ ողջամիտ բոլոր իրավաչափ գործողությունները Դիմողի շահերը լավագույնս պաշտպանելու նպատակով, չբացառելով նաև ի սկզբանե Դիմողի արտահայտած դիրքորոշումից տարբերվող նոր դիրքորոշում արտահայտելու հնարավորությունը: Հարկ է նաև ընգծել, որ Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը Փաստաբանին հնարավորություն է ընձեռում նաև ի շահ վստահորդի շեղվել վերջինիս դիրքորոշումից, հետևապես այս առումով Փաստաբանի հիմնավորումները ևս փաստարկված չեն:

Այս համատեքստում, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ, ելնելով Փաստաբանին մեղսագրվող կարգապահական խախտման էությունից, Փաստաբանն առնվազն կրում է Դիմողի իրավունքների ու շահերի պաշտպանության ուղղությամբ իր կողմից ձեռնարկված գործողությունների կատարման վերաբերյալ ապացուցման բեռը, սակայն Փաստաբանն այդ կապակցությամբ չի ներկայացրել այնպիսի ապացույց, որից առերևույթ կբխեր Դիմողին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու հանգամանքը: Ավելին, Փաստաբանի գործողություններն ըստ էության սահմանափակվել են միայն քրեական վարույթում ներկա լինելով, սակայն ըստ գործի նյութերի՝ «պաշտպանական» բնույթի որևէ գործողություն Փաստաբանը չի իրականացրել:

Անդրադառնալով Փաստաբանի 24.03.2023թ. միջնորդությանը՝ Դիմողի նկատմամբ կիրառվելիք կալանավորման հետ չկապված այլ խափանման միջոց կիրառելու մասին, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Փաստաբանն ընդամենը նշել է.

«(…) Արա Հովակիմյանը նախաքննության ընթացքում աջակցել է Ձեզ, տվել ինքնախոստովանական ցուցմունքներ, զոջացել կատարածի համար, ունի մշտական բնակության վայր (…)» ինչն ակնհայտ է եղել: Ավելին, Փաստաբանը չի ներկայացրել որևէ ապացույց նշված միջնորդությունը քննիչին հանձնելու կամ փոստով ուղարկելու մասին:

Բացի այդ, նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերի[1] կարգավորումներից հետևում է, որ ցանկացած դեպքում միջնորդությունը հարուցելու դեպքում դրա քննարկման արդյունքներով վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշում կայացնի և ուղարկի միջնորդությունը հարուցած անձին, անհասկանալի է թե ինչ ճակատագիր է ունեցել Փաստաբանի հիշյալ միջնորդությունը, քանի որ դրա կապակցությամբ պետք է կայացվեր առանձին որոշում, մինչդեռ այդպիսի որոշում ևս Փաստաբանը Հանձնաժողովին չի ներկայացրել:

Հարկ է նաև նկատել, որ ներկայացված նյութերում առկա է Քննիչի 25.03.2023թ. թվագրված՝ խափանման միջոց բացակայելու արգելք կիրառելու մասին որոշումը, որում որևէ նշում առկա չէ Փաստաբանի կողմից հարուցված միջնորդությունը բավարարելու և ըստ այդմ այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից նշված այն դիրքորոշմանը, որ, գնահատելով վերջինիս ազատության մեջ մնալու իրական հնարավորությունները՝ քրեական վարույթին մասնակցել են մարտավարական եղանակով, որը քննության սկզբնական փուլում հնարավորություն է տվել Դիմողին՝ բազմադրվագ հանցանքներ կատարելու հիմնավոր կասկածի առկայության պայմաններում մնալ ազատության մեջ, ապա դրանք Հանձնաժողովի գնահատմամբ խնդրահարույց են այն առումով, որ քրեական վարույթին իր ներգրավվելու պահին (15.02.2023թ.,) վստահորդի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված չի եղել և ավելին՝ այն չի հարուցվել նույնիսկ դրանից մեկ ամիս և ավելի ժամանակ:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի կողմից ներկայացրած բացատրությունները և ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանի վարքագծում **առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշները**: Նշվածից ելնելով՝ Հանձնաժողովը հաստատված է համարում Կանոնագրքի 3.1.9 ենթակետի նաև 2-րդ պայմանը՝ ***Փաստաբանի կողմից վստահորդին՝ Դիմողին, բավարար իրավական օգնություն ցույց տված չլինելու փաստը***, ինչը հանգեցնում է Փաստաբանի կողմից ***ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում*** թույլ տրված լինելու փաստի հաստատմանը:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

---

[1] **ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *բանավոր միջնորդությունը պետք է քննության առնվի և լուծվի անհապաղ, իսկ գրավոր միջնորդությունը՝ այն ստանալուց հետո՝ յոթ օրվա ընթացքում,* **իսկ 6-րդ մասի համաձայն՝** *միջնորդության վերաբերյալ ընդունված որոշման պատճենը վարույթն իրականացնող մարմինն անմիջապես ուղարկում է միջնորդությունը հարուցած անձին:*

Պալատը գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ պետք է կիրառել «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժը՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

***5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում*:**

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել՝*

1) սույն օրենքով նախատեսված պարտականությունների (ներառյալ՝ սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարքագծի կանոնների) դիտավորությամբ կատարված խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի հիմնական խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանական էթիկայի նորմերին համապատասխանող վարքագծի ապահովումն է: Սույն խնդրի իրացման հիմնական իրավական միջոցներից մեկը Պալատի կարգապահական գործառույթն է, որը դրսևորվում է Օրենքով և Կարգապահական հանձնաժողովի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելով: Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Պալատն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում

ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ, ինչպես նաև որպես փաստաբանի ազատության և անկախության երաշխիք Պալատին իրավունք է տրվում փաստաբանի նկատմամբ կիրառել արտոնագրի դադարեցման կարգապահական տույժը միայն նրա կողմից դիտավորությամբ կատարված այնպիսի խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ: Օրենքով Պալատին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Պալատը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Այսպես. Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով Պալատը պարտավորվում է փաստաբանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելիս ղեկավարվել համաչափության սկզբունքով, ինչպես նաև հաշվի առնել կարգապահական խախտման հետևանքները, իրավախախտի անձը, մեղքի աստիճանը և վերաբերելի այլ կարևոր հանգամանքներ:

Պալատի հանձնաժողովը նաև հարկ է համարում անդրադառնալ Պատասխանողի պատասխանատվությունն անհատականացնող վերոհիշյալ հանգամանքներին:

Իրավաչափ նպատակ և համաչափություն

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժին ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշների կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Մեղքի աստիճանը

Օրենքի 39.10 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով Պալատին իրավունք է տրվում փաստաբանի գործունեության արտոնագրի գործողությունը դադարեցնել, եթե նրա կողմից կատարվել է դիտավորյալ կարգապահական խախտում, որը համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Տվյալ պարագայում Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում, որ Պատասխանողի կողմից չեն իրականացվել Դիմողի շահերի պատշաճ պաշտպանության ուղղությամբ արդյունավետ ու բավարար գործողություններ, որոնց միջոցով ողջամիտ հավանականություն կստեղծվեր վստահորդի համար բարենպաստ պայմանների ստեղծման, ինչպես նաև Փաստաբանի կողմից փաստացի չի ներկայացվել որևէ ապացույց, որը կհիմնավորեր քրեական գործով պաշտպանության համար իրեն վստահորդի կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձի դիմելու փաստը, հետևաբար փաստաբանը քրեական գործով վարույթում է հայտնվել նախաքննության մարմնի առաջարկով, ինչը Կանոնագրքով սահմանված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում է ու անհամատեղելի է փաստաբանի բարձր կոչման հետ:

Միաժամանակ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը պարտավոր էր գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթն ու թույլ չտալ այդպիսի վարքագիծ:

Կարգապահական խախտման հետևանքները

ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ *Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:*

Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

Օրենքի 3-րդ հոդվածը նույնպես երաշխավորվում է փաստաբանության անկախությունը:

Ըստ այդ հոդվածի՝ «*Փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, <u>չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ</u>:*

<u>Փաստաբանությունը գործում է անկախության</u>, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա:»:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.1 կետի համաձայն՝ *իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս փաստաբանը պետք է անկախ լինի, այսինքն՝ ազատ ազդեցություններից և, հատկապես, այնպիսի ազդեցություններից, որոնք կարող են ծագել փաստաբանի անձնական հետաքրքրություններից կամ արտաքին ճնշումից և որը կարող է բացասաբար ազդել վստահորդի գործի վրա: Փաստաբանը պետք է խուսափի իր անկախության թուլացումից և ուշադիր լինի իր մասնագիտական չափորոշիչների հանդեպ, որպեսզի նրանք չհարմարեցնի դատարանին կամ երրորդ անձանց գոհացնելու համար: Այս անկախությունը անհրաժեշտ է նաև ոչ վիճելի դեպքերում, և դատավարությունների ժամանակ*:

Կանոնագրքի 3.1.9-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը չի կարող ընդունել նախաքննության և դատաքննության փուլերում տվյալ գործով վարույթ իրականացնող պաշտոնատար անձի կողմից իրեն ուղղված՝ տվյալ վարույթին առնչվող անձի գործի*

վարման հետ կապված իրավական օգնություն ցույց տալու առաջարկ: ***Եթե փաստաբանը չկարողանա ապացուցել, որ քրեական գործով պաշտպանության համար իրեն է դիմել վստահորդը կամ նրա հանձնարարությամբ այլ մասնավոր անձ, ապա Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է հաստատված համարել այն փաստը, որ փաստաբանը քրեական գործով վարույթում է հայտնվել նախաքննության մարմնի առաջարկով:*** *Պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է հաշվի առնել նաև փաստաբանի կողմից իրականացրած գործողությունների բնույթը՝ վստահորդի շահերը պատշաճ կարգով ներկայացված լինելու տեսանկյունից:* ***Փաստաբանի կողմից նախաքննության մարմնի պաշտոնատար անձի հանձնարարությամբ (առաջարկությամբ) գործին ներգրավված լինելու և վստահորդին բավարար իրավական օգնություն ցույց տված չլինելու արարքների համակցությունը հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում****:*

Պալատը գտնում է, որ Օրենքով և Կանոնագրքով նախատեսված **<u>խիստ</u>** սահմանափակումները կոչված են երաշխավորելու փաստաբանի կողմից իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ լիակատար անկախությունը՝ այդ թվում տարբեր շահերից, որոնք կարող են ազդել վերջինիս կողմից անձին իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ անկախ և բարեխիղճ լինելու վրա՝ ապահովելով վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ Դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը.* ***«Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»:*** *Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները <u>սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը</u>»:*

Պալատը արձանագրում է, որ անձը զրկված կլինի իրացնելու ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավաբանական օգնություն ստանալու իր հիմնական իրավունքը, ինչպես նաև չի ունենա պատշաճ վերաբերմունք փաստաբանական ինստիտուտի ու փաստաբանների նկատմամբ, եթե Փաստաբանը ազատ չլինի արտաքին ազդեցությունից:

Տվյալ դեպքում կարգապահական գործի նյութերով հաստատվել է, որ Փաստաբանը քրեական գործով վարույթում է հայտնվել նախաքննության մարմնի առաջարկով, ինչի հետևանքով չի մատուցել բարեխիղճ իրավաբանական օգնություն՝ իր վստահորդին թողնելով անօգնական վիճակում: Ավելին, Փաստաբանը չի նպաստել արդարադատության իրականացմանը, ինչը Կանոնագրքի 1.1 ենթակետով սահմանված՝ փաստաբանի ուղղակի պարտականությունն է:

Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը՝ մասնավորապես այն, որ խախտումն իր բնույթով խաթարում է փաստաբանի վստահելիությունն ու վնասում է փաստաբանի մասնագիտական գործունեության վերաբերյալ հանրային ընկալմանը:

Փաստաբանի անձը, առկա տույժերը

Պատասխանողն առաջին անգամ չէ, որ թույլ է տալիս կարգապահական խախտում: Ընդ որում, մեկ ավարտված վարույթով Պատասխանողը Հանձնաժողովի կողմից պատասխանատվության է ենթարկվել Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.9 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով (մասամբ նույն հիմքերով), որի արդյունքներով վերջինս Հանձնաժողովի 13.07.2023թ. թիվ ԿԳ-23015-2-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ «խիստ նկատողություն» և «վերապատրաստման դասընթացներին մասնակցություն» տույժերի տեսքով:

Այսպես՝

1) սույն գործի շրջանակներում հաստատվել են փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանին վերագրվող Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.1.9 ենթակետերի պահանջների խախտումները, որպիսի պայմաններում դրանց համակցությունը **հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում,**

2) փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.1.9 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով արդեն եղել է հարուցված կարգապահական վարույթ (մասամբ նույն հիմքերով), որի արդյունքներով վերջինս Հանձնաժողովի 13.07.2023թ. թիվ ԿԳ-23015-2-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ «խիստ նկատողություն» և «վերապատրաստման դասընթացներին մասնակցություն» տույժերի տեսքով՝ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.1.9 ենթակետի պահանջների խախտման համար,

3) փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանի նկատմամբ նշանակված կարգապահական տույժը մարված չէ, իսկ Հանձնաժողովի 13.07.2023թ. թիվ ԿԳ-23015-2-Ա որոշումը մտել է ուժի մեջ և սահմանված կարգով բողոքարկված չէ,

4) փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանը, տեղեկացված լինելով (այդ թվում Հանձնաժողովի 13.07.2023թ. թիվ ԿԳ-23015-2-Ա որոշման կայացմամբ, դրան նախորդած՝ կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշման կայացմամբ և այլ գործողություններով) Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.1.9 ենթակետերով սահմանված պահանջների պահպանման իր պարտականության մասին, կատարել է նշված պահանջների խախտումը դիտավորությամբ՝ գիտակցելով իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, ընդ որում՝ վերջինս անկախ ամեն ինչից պարտավոր է տիրապետել Կանոնագրքի և Օրենքի պահանջներին ու ցուցաբերել դրանց համահունչ վարքագիծ:

Այսպիսով, Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանողը դրսևորել է շարունակական հակաիրավական և փաստաբանական էթիկային հակասող վարքագիծ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Պատասխանողի վարքագծի օբյեկտիվ կողմի հանգամանքները վկայող փաստերը բավարար են՝ հավաստելու համար, որ վերջինիս կատարած արարքը հանդիսանում է ակնհայտ կոպիտ կարգապահական խախտում և վերջինիս կողմից կատարված կարգապահական խախտումը դրա կատարման հանգամանքներով ու Դիմողի, ինչպես նաև փաստաբանական ինստիտուտի համար առաջացրած հետևանքներով պայմանավորված՝ համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Պատասխանողի մեղքի բնույթն ու աստիճանը և անձը բնութագրող հանգամանքները հիմք են նրա նկատմամբ կիրառելու «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» կարգապահական տույժը: Սույն հանգամանքները վկայում են նաև այն մասին, որ առկա է համաչափություն Պալատի Հանձնաժողովի կողմից հետապնդվող իրավաչափ նպատակի և այդ ուղղությամբ ընտրված միջոցի միջև:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 7-րդ և 8-րդ մասերի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 2-րդ մասի և 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ռազմիկ Արամայիսի Շիրոյանի (արտոնագիր՝ թիվ 285) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2 և 3.1.9 ենթակետերի խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-23023-2-Ա
14 դեկտեմբերի 2023թ.
ք.Երևան